ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Φλωρεντία Εὐαγγελάτου-Νοταρᾶ. Σεισμοί στο Βυζάντιο από τον 13ο μέχρι και τον 15ο αἰώνα. Ἱστορική ἔκθεση. Ἀθήνα. 1993. 184 σελ.

Ֆլորենտիա Էվանգելատու-Նոտարա. Երկրաշարժերը Բյուզանդիայում XIII—XV դդ. Ներառյալ։ Պատմական հետազոտություն, Աթենք, 1993. 184 էջ։

Երկրաշարժերը իրենց անակնկալությամբ ու հետևանքների սարսափելիությամբ միշտ էլ հուզել են մարդկանց։ Նրանք ջանացել են բացատրություն տալ այդ երևույթին, իսկ այդ բանն անելու անկարողությունը նրանց ստիպել է այն բացատրել դևերնական ուժերի գործունեությամբ։ Հին Հունաստանում հավատացած էին, որ երկրաշարժի պատճառը Էնդելադոսն է, Տարտարոսի և Գեայի որդին, դիցանունների պարագլուխը, որը պարտություն է կրել Զևսից (կամ Աթենասից)։ Աթենասը նրան թաղեց Սիկիլիայում, նրա վրա գցելով Էտնա լեռը։ Թաղված Էնդելադոսի ցնցումներն ահա երկրաշարժ են առաջացնում, իսկ նրա շունչը հուր և լավա է ժայթքում հրաբխի խառնարանից։ Քիչ չէին, սակայն, անտիկ շրջանի դիտնականները, որոնք փորձեցին երևույթին բնական բացատրություն տալ։ Քրիստոնեության շրջանի մարդիկ երկրաշարժը աստուծո ցասման արտահայտություն համարեցին՝ ի պատիժ նրանց գործած մեղքերի։

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով սեյսմիկ գոտում, շատ է տուժել երկրաշարժերից։ Հայկական միջնադարյան աղբյուրները հաճախ են այդ երևույթի մասին խոսել, նկարագրել երկրի տարբեր շրջաններում ու քաղաքներում տեղի ունեցած բնական աղետը։ Հայ ուսումնասիրողներն էլ անուշադրության չեն մատնել թեման։ Դրան է վերաբերում Վ. Ա. Ստեփանյանի մենագրությունը՝ «Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում» դիրքը (Երևան, 1964)։ 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի առթիվ ևս լույս տեսան մի շարք աշխատություններ։

Նույն սեյսմիկ գոտում էր գտնվում նաև Բյուզանդական կայսրությունը, որն իր ամբողջ պատմության ընթացքում նույնպես շատ հաճախ է տուժել երկրաշարժերից։ Հույն կին բյուզանդագետի գրչին պատկանող գրախոսվող աշխատությունը, որն իր տեսակի մեջ յուրատուկ է, հասկանալի պատճառով հետաքրքրական է նաև հայագետների համար։ Պետք է ասել, որ այս դրքի լույս ընծայումից առաջ երևույթն ուսումնասիրվել է բյուզանդագետների կողմից[1], բայց երբ նրանց կատարած աշխատանքը համեմատության մեջ ենք դնում նոր լույս տեսածի հետ, ապա համոզվում ենք, որ նախորդների արածը շատ քիչ է և՛ աղբյուրների օգտագործման, և՛ նյութի ուսումնասիրության տեսակետից։

Հեղինակը հետազոտության առարկա է դարձրել Բյուզանդական կայսրության վերջին շրջանում տեղի ունեցած երկրաշարժերը, քանի որ, նրա ասելով, քաղաքական և սոցիալական երևույթները, որոնք առնչվում են այդ տարերային երևույթի հետ, ներկայացնում են յուրատկություններ՝ անմիջականորեն շաղկապված պատմական դեպքերի հետ։ Խոսքը վերաբերում է Հուստինիանոսյան և Մակեդոնական հարստության ժամանակաշրջաններից միանգամայն տարբեր մի ժամանակաշրջանի։ Անչափ թուլացած Բյուզանդիան չէր կարող դիմադրել խաչակիրներին։ Դրան հետևում է նրա տարածքի կոտորակումը, լատինական և հունական փոքրիկ

---

[1] G. Downey. Earthquakes at Constantinople and Vicinity. A. D. 342—1454. Speculum, vol. 30, 1955, p. 596—600; V. Grumel, Traité d'Etudes Byzantines, I. La Chronologie, Paris, 1958; P. Wirth, Zur „byzantinischen" Erdbebenliste, Byzantinische Forschungen, I, 1966, S. 393—397; N. Ambraseys—C. Melville, An Analysis of the Eastern Mediterranean Earthquake of 20 May 1202. Historical Seismograms and Earthquakes of the World, 1988, p. 181—200; Β. και Κ. Παπαζάχου. Οἱ σεισμοί της Ἑλλάδας, Θεσσαλονίκη, 1989; N. Ambraseys—C. Finkel, Longterm Seismicity of Istambul and the Marmara Sea Region, Terra Nova, 3, 1991, p. 527—549.

պետությունների առաջացումը։ Տնտեսական բուռն վիճակը, օտար ժողովուրդների միջամտությունը պետության ներքին գործերին, թուրքերի կողմից ավանդական տարածքների գրաված լրացնում են Բյուզանդիայի անկման պատկերը այս վերջին դարերում, որով այդ ժամանակի ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերը սկսեցին համարվել կայսրության գլխին թափվելիք փորձությունների կանխանշումներ։

Աշխատությունը հիմնված է նախ և առաջ այդ ժամանակաշրջանի պատմիչների գործերի վրա, որոնք, պատմական անցուդարձերը շարադրելիս, հաճախ վկայում են տեղի ունեցած երկրաշարժերի մասին։ Այդ պատմիչները (Գեորգ Պախիմերես, Նիկեփոր Գրիգորաս, Հովհաննես Կանտակուզինոս), լինելով զարգացած մարդիկ, այս կամ այն երկրաշարժը նկարագրում են շատ հանգամանալից։ Նրանք երևույթը դիտում են նրա սեյսմոլոգիկ տեսանկյունից։ Պատմողական աղբյուրներից բացի, հեղինակն առատ նյութ է քաղել բյուզանդական մանր ժամանակագրություններից և ձեռագրերի հիշատակարաններից, որոնց ստեղծողները, ի տարբերություն վերոհիշյալ պատմիչների, առանձնապես զարգացած մարդիկ չէին, և, որպես կանոն, հիշում են միայն մեկ երկրաշարժ և լրացնում ու հաստատում են պատմիչների տվյալները։ Չեն անտեսվել նամականին, փիլիսոփայական երկերը, վիմական արձանագրությունները, ապա և արևելյան ու արևմտյան աղբյուրների տվյալները (արաբական, հայկական՝ օգտագործվել են Հեղինի պատմիչի ժամանակագրությունը 1200—1204 թթ. Կոստանդնուպոլսին, Փոքր Ասիային, Կիպրոսին, Ասորիքին, Եգիպտոսին և Սիկիլիային հարված երկրաշարժի վերաբերյալ, վենետիկի և Ջենովայի դիվանական փաստաթղթերը և այլն)։

Երկրաշարժերի մասին տվյալները շատ առատ են Կոստանդնուպոլսի և նրա շրջակայքի վերաբերյալ, քանզի պատմիչները և ուսյալ մարդիկ բնակվում էին մայրաքաղաքում և, որպես կանոն, հանդիպվում էին Կոստանդնուպոլսով, իսկ ավելի քիչ կամ ամենևին՝ նահանգներով։

Աշխատության հիմնական բաժնում, որ վերնագրված է «Երկրաշարժերը» (էջ 17—111), ժամանակագրական հաջորդականությամբ շարադրված են տարբեր շրջանները հարված երկրաշարժերի մասին տեղեկությունները՝ 1200 թ. սկսած մինչև 1491 թ. (հեղինակը վերցրել է ամբողջ XV դարը, քանի, ինչպես հայտնի է, Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց 1453 թ.)։

Նկելով աղբյուրների բերած տվյալներից, հեղինակը նշում է՝ 1) երկրաշարժի ժամանակը, 2) նրա ուժգնությունը, 3) տեղությունը, 4) ծովային սեյսմիկ ալիքի առաջացումը, 5) պատճառած վնասները, 6) զոհերը, 7) պետական հոդացողությունը (կամ դրա բացակայությունը) ազետյալներին օգնելու և ավերակների վերականգնման մասին, 8) երկրաշարժի սոցիալական, տնտեսական և քաղաքական հետևանքները։

Եթե համախմբենք այդ երեք դարերի ընթացքում Բյուզանդական կայսրության սահմաններում տեղի ունեցած երկրաշարժերն ըստ տարածաշրջանի, ապա ստացվում է հետևյալ պատկերը։ Նշում ենք Բյուզանդիայի երկրաշարժից տուժած առավել խոշոր կենտրոնները՝ բերելով տարեթվերը.

Կոստանդնուպոլիս (1200—1204), 1231, 1289, 1296, 1303, 1315, 1332, 1344, 1354, 1391, 1402, 1419, 1437, 1452—1453։ Թեսաղոնիկե (1420, 1430)։ Կիպրոս (1200—1204, 1222, 1227, 1350, 1392, 1395, 1397, 1408, 1477, 1479, 1481, 1486, 1491)։ Թրակիա (1247, 1343, 1344, 1354)։ Փոքր Ասիա (1200—1204, 1280, 1327, 1389, 1399—1400, 1419)։ Կարնքսս (1300)։ Էգեական ծովի կղզիներ (1256, 1383, 1389, 1417, 1481, 1482)։

Աշխատության մեջ խոսվում է նաև Հոնիական ծովի կղզիներում, Հունաստանի մայրցամաքում, Եգիպտոսում, Ասորիքում և այլ վայրերում տեղի ունեցած երկրաշարժերի մասին։ Մանրամասն նկարագրված է Զմյուռնիային վերաբերողը (1389 թ. մարտի 20), որը հայտնվեց միաժամանակ Քիոս կղզուն, Նոր Փոկեային և Իկարիային։ Այդ մասին հիշատակում են բյուզանդական ձեռագրերի հիշատակարանները և մանր ժամանակագրությունները։ Հիշատակարաններից մեկի դեպքին ականատես հեղինակն այն որակում է որպես «ահռելի», «մեծ»։ Ցնցումը մեկն էր, ստեղծվեց ծովային սեյսմիկ ալիք, բայց զոհերի թիվը չնչին էր, որը բացատրվում է ցնցման ժամով (ցերեկվա ժամը 2—3-ը), երբ բնակչությունը տներից դուրս էր գանվում։

Աշխատության մեջ կա հատուկ բաժին՝ «Ժամանակակիցները երկրաշարժերի առաջացման պատճառների մասին. կրոնականություն և սնոտիապաշտություն» (էջ 112—130)։ Այս շրջանում, նշում է գրքի հեղինակը, բյուզանդացի գիտնականների համար երկրաշարժի առաջացման հարցում տիրապետող էր Արիստոտելի տեսությունը, համաձայն որի, երևույթը առաջանում է երկրի մեջ փչող քամուց և այնտեղի խոնավության գոլորշիացումից։ Եկեղեցականները և

հասարակ մարդիկ, որպես կանոն, երևույթի պատճառ էին համարում աստծո ամենազորությունը և մարդկանց մեղսաշատության հետ կապված նրա տված պատիժը, կամ թե հավատացած էին, որ երկրաշարժը գալիք աղետների նախանշումն է։

«Ժողովրդագրական» բաժնում (էջ 131—135) խոսվում է երկրաշարժերի պատճառով բնակչության զանգվածների, որոշ քաղաքների բնակիչների մեծաքանակի և էքսոդական կազմի մասին։ «Քաղաքաշինություն-կառույցներ» (էջ 136—139) վերնագրի տակ բերված են աղբյուրների հարուստ տեղեկություններ՝ նշված հարցերի վերաբերյալ։

Գրքի վերջում տրված է «Երկրաշարժերի ցուցակ» (էջ 145—153. աղբյուրների հիշատակությամբ), աղբյուրների և գրականության ցուցակ (շուրջ 300 անուն), Բ.զանդական կայսրության քարտեզը՝ երկրաշարժերի տեղերի և ժամանակի նշումով։

Ֆլորենտիա էվանգելատու-նոտարայի գիտական բարձր մակարդակով գրված գիրքը արժանի է բարձր գնահատականի։ Այն, ինչպես ասվեց սկզբում, օգտակար պիտի լինի Հայաստանի լեռնաշխարհը հաճախ ցնցած երկրաշարժերը ուսումնասիրողի համար։

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱԱ ակադեմիկոս